# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ Շիրակի մարզ, ք. Մարալիկ, հեռ.0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 948-Ա**

<<08>> նոյեմբերի 2024 թվական քաղաք Մարալիկ

**ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԿԱԴԻ ԱՐԾՐՈՒՆԻԻ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԻՊԵՄԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-013-0112-003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 10.05624 ՀԵԿՏԱՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ՝ ԲԱԶՄԱՄՅԱ ՏՆԿԱՐՔԻ՝ ՄՐԳԱՏՈՒ ԱՅԳՈՒ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1066-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման կարգի» 7-րդ, 9-րդ և 11-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 81-րդ հոդված 3-րդ մասի դրույթներով և հաշվի առնելով, որ քաղաքացի Արկադի Արծրունիի Աղաջանյանի կողմից ենթավարձակալության իրավունքով օգտագործվող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Անիպեմզա բնակավայրի վարչական տարածքում գտնվող 08-013-0112-003 կադաստրային ծածկագրով 10.05624 հեկտար գյուղատնտեսական նշանակության արոտ հողատեսքի հողամասում ենթավարձակալի կողմից կատարված միջոցառումների արդյունքում հիմնվել է բազմամյա տնկարք՝ մրգատու այգի և իր 2024 թվականի սեպտեմբերի 13-ի դիմումով դիմել է արոտ հողատեսքի ցածրարժեք հողատեսքի հողամասը ավելի բարձրարժեք հողատեսքի՝ բազմամյա տնկարքի՝ մրգատու այգի փոխադրելու խնդրանքով.

**Որոշում եմ՝**

1. Քաղաքացի Արկադի Արծրունիի Աղաջանյանի կողմից ենթավարձակալության իրավունքով օգտագործվող /Վկայական՝ N 05062024-08-0024/ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիպեմզա բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող 08-013-0112-003 կադաստրային ծածկագրով 10.05624 հեկտար գյուղատնտեսական նշանակության 4-րդ կարգի արոտ հողատեսքի հողամասի ցածրարժեք հողատեսքը փոխել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 4-րդ կարգի ջրովի բազմամյա տնկարքի՝

մրգատու այգու և ենթավարձակալության պայմանագրում կատարել սույն որոշումից բխող համապատասխան փոփոխություններ և լրացումներ:

2. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 81-րդ հոդված 3-րդ մասի համաձայն, սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողատեսքը փոփոխված հողամասի տարեկան վարձավճարը սահմանել տվյալ հողամասի հողի հարկի տարեկան դրույքաչափին համապատասխան՝ գումարով՝ 136 212 /մեկ հարյուր երեսունվեց հազար երկու հարյուր տասներկու/ Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Գյուղատնտեսական նշանակության հողամասի հողատեսքի փոփոխման վերաբերյալ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակը տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանմանը, իսկ մեկ օրինակը հողամասի վարձակալին:

4. Գյուղատնտեսական նշանակության հողամասի հողատեսքի՝ սույն փոփոխությունն արտացոլել համայնքի 2025 թվականի համար կազմվող հողային հաշվեկշռում:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<08>> նոյեմբերի 2024 թվական
Քաղաք Մարալիկ